ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1

2023 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 21-ԻՆ ԿՆՔՎԱԾ «ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՁԵՎՈՎ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ » N 1045-11004 ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ք. Երևան 31 հոկտեմբերի 2023թ.

Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը (այսուհետև՝ պետական մարմին), ի դեմս գլխավոր քարտուղար Հասմիկ Հակոբյանի, որը գործում է պետական մարմնի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և «Կրթություն և առողջություն» հասարակական կազմակերպությունը (այսուհետև՝ Կազմակերպություն), ի դեմս նախագահ՝ Քնարիկ Մխիթարյանի, որը գործում է Կազմակերպության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից (այսուհետ՝ միասին՝ կողմեր), հիմք ընդունելով 2023 թվականի օգոստոսի 21-ին կնքված «Պետության կողմից դրամաշնորհի ձևով տրամադրվող ֆինանսական աջակցության գումարների օգտագործման մասին» N 1045-11004 պայմանագրի (այսուհետև՝«Պայմանագիր») 8.1 կետը, կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

1.ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Կողմերը փոխադարձ համաձայնությամբ որոշեցին պայմանագրում կատարել հետևյալ փոփոխությունը՝

1.1.1 Պայմանագրի 2.4.11. կետում ««Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով» բառերից հետո ավելացնել «՝ պետության կարիքների համար կատարվող գնումների կանոններին համապատասխան և առաջնորդվել ՀՀ աշխատանքային օրենսդրությամբ,» բառերը:

1.1.2 Պայմանագրի 3.1 կետը խմբագրել հետևյալ բովանդակությամբ.

«Պայմանագրի 1.1-րդ կետում սահմանված գումարի պետական մարմինը Կազմակերպությանն է հատկացնում Պայմանագրի կնքումից հետո 100% կանխավճարի ձևով: »:

2. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

2.1 Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Սույն համաձայնագրում չնշված՝ Պայմանագրով ստանձնած Կողմերի իրավունքներն ու պարտականությունները թողնվում են անփոփոխ:

2.3 Սույն համաձայնագիրը կազմված է 1 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ	ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ
ՀՀ կրթության, գիտության, սպորտի և մշակույթի նախարարություն	**«Կրթություն և առողջություն» հասարակական կազմակերպություն**
ք. Երևան, Վազգեն Սարգսյան 3	ք. Երևան, Էրեբունի, Թորամանյան 39
Կառավարական տուն 2	«Հայբիզնեսբանկ»
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն	Հ/Հ 1150015091871888
Հ/Հ 900000911579	ՀՎՀՀ 01500362
ՀՎՀՀ 02698732	Նախագահ՝
Գլխավոր քարտուղար՝	
Հ. Հակոբյան	Ք. Մխիթարյան
Կ.Տ /ստորագրություն/	/ստորագրություն/ Կ.Տ